

Coca-Cola®

Մոցիալական,
տնտեսական և
շրջակա միջավայրի
վրա ազդեցության
գնահատում



«Կոկա-Կոլա Հելենիկ Բոթլինգ Քամպինի
Արմենիա» ՓԲԸ

Օգոստոս 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4 ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5 ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

6 ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈւՂԵՐՁԸ

8 ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

10 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- 10 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆ
- 12 ԱՐԺԵՔՆԵՐ
- 14 ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
- 15 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- 16 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԱՆԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՈՒՄ
- 19 ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱ

22 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

- 23 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
- 26 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԱ-Ի ՏԵՍԱՆԿՑՈՒՆԻՑ
- 28 ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ
- 31 ՖԻՍԿԱԼ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ
- 31 ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

32 ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- 33 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
- 35 ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ
- 37 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
- 37 ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ
- 37 ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆԵՐ

38 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

- 40 ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ
- 41 ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

42 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

- 43 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ
- 44 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
- 44 ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

46 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- 47 ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ
- 48 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- 48 ՇԱՀԱՌՈՒՆԵՐ
- 49 ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

52 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

53 GRI ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

60 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- 60 ՀԱՎԵԼՎԱԾ 1
- 62 ՀԱՎԵԼՎԱԾ 2
- 63 ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

«Կոկա-Կոլա ՀԲԲ»	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի»
ԲՄԿ	Բնապահպանական, սոցիալական և կառավարչական
ԵՄ	Եվրոպական միություն
ՀԱԱ	Համախառն ավելացված արժեք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՈԱՄ	Որակի և անվտանգության միջավայր
ՍԱԿՍ 22000 տարբերակ 5.1	Սննդի անվտանգության կառավարման ստանդարտ 22000 տարբերակ 5.1
ՍԱՀՀ	Սննդի անվտանգության համակարգերի հավաստագրում
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
EBIT	Շահույթը նախքան տոկոսային ծախսերը և շահութահարկով հարկումը
GRI ստանդարտներ	Համաշխարհային հաշվետվությունների նախաձեռնության ստանդարտներ (GRI)
ISO	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ISO 9001	Որակի կառավարման ստանդարտ 9001
ISO 45001	Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության ստանդարտ 45001

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱԱ	ՀԱԱ-ն չափում է առանձին արտադրողի, արդյունաբերության ոլորտի, տնտեսության ճյուղի կամ գործունեության ներդրումը տնտեսությունում՝ առանց միջանկյալ սպառման (օրինակ՝ արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների և ծառայությունների): Այն չափում է արտադրված ապրանքների և ծառայությունների տնտեսական արժեքը:
ՀՆԱ	ՀՆԱ-ն որոշակի ժամանակաշրջանի ընթացքում երկրի սահմաններում արտադրված ամբողջ պատրաստի արտադրանքի և ծառայությունների դրամական արժեքն է:
Ուղղակի ազդեցություն	Առաջին մակարդակի ազդեցություն, որն առաջանում է ընկերության/ արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի գործունեության և ստեղծած արժեքի արդյունքում:
Անուղղակի ազդեցություն	Երկրորդ մակարդակի ազդեցություն, որն առաջանում է այն գործունեությունից և արժեքից, որոնք ստեղծվում են ընկերության/ արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի մատակարարման շղթայի միջոցով սեփական գործունեության համար ապրանքների և ծառայությունների գնման արդյունքում:
Ածանցյալ ազդեցություն	Մուլտիպլիկատորի ազդեցություն, որն առաջանում է ընկերության/ արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի ուղղակի աշխատողների և մատակարարման շղթայի աշխատողների կողմից ընկերության/արդյունաբերության ոլորտի/տնտեսության ճյուղի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը ծախսելու արդյունքում:
I-ին կարգի մուլտիպլիկատոր	I-ին կարգի մուլտիպլիկատորը ներառում է ուղղակի և անուղղակի ազդեցությունները:
II-րդ կարգի մուլտիպլիկատոր	II-րդ կարգի մուլտիպլիկատորը ներառում է ուղղակի, անուղղակի և ածանցյալ ազդեցությունները:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՂԵՐՁԸ

2021 թվականը
հաջողության
ևս մեկ տարի էր
Ընկերության
համար:

Ընկերությունը
2021 թվականին
ընդլայնել է շուկայում
իր ներկայությունն
օգտագործման
համար պատրաստի
ոչ ակոհողային
ըմպելիքների
գրեթե բոլոր
կատեգորիաներում
և այդ ըմպելիքների
ընդհանուր ծավալում
արժեքավոր
մասնաբաժին ձեռք
բերել:

ԱՐԹՈՒՐ ՍԱՀՎԿՅԱՆ

«Կոկա-Կոլա Հելլենիկ
Բոթինգ Քամփնի Արմենիա» Գլխավոր
տնօրեն



2021 թվականը, մեղմ ասած, լի էր իրադարձություններով: Կարող ենք այն բնութագրել որպես նշանակալի ձեռքբերումների և արագ զարգացման տարի: «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն («Ընկերություն») հաջողությամբ դիմակայեց 2021թ. բոլոր մարտահրավերներին՝ կիրառելով կայուն և ճկուն մոտեցում բիզնեսը վարելու գործում: Տեխնոլոգիաների, թվայնացման և աշխատանքի նոր մեթոդների կիրառման նշանակալի արագացումը շարունակվում էր:

Հետադարձ հայացք գցելով ընդունում ենք, որ 2020-2021թթ. համավարակի մարտահրավերները նշանակում էին, որ արտակարգ միջոցներ պետք է ձեռնարկվեին իրական ժամանակում: Հաշվի առնելով ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ խնդիրները՝ Ընկերությունը ցուցաբերել է ճկունություն և կիրառել է ճգնաժամային կառավարման արդի պլան՝ ռիսկերը մեղմելու համար:

Առաջիկայում Ընկերությունը ձգտում է բավարարել արագ զարգացող ներքին շուկայի կարիքները՝ արտադրելով, ներմուծելով և մատակարարելով երկու կատեգորիայի ըմպելիքներ, մասնավորապես, գազավորված ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքներ, այդ թվում նաև պրեմիում ալկոհոլային ըմպելիք: Ռազմավարական ձեռքբերումների միջոցով սպառողակենտրոն սպրանքատեսականին ամրապնդելու նպատակով՝ 2021թ-ին Ընկերությունը կալորիականության նվազեցումը դարձրեց իր հիմնական առաջնահերթությունը՝ սպրանքատեսականու մեջ առանց շաքար արտադրանք ավելացնելու հետ հանդերձ:

2021 թվականը հաջողության ևս մեկ տարի էր պատրաստի ոչ ալկոհոլային խմիչքների գրեթե բոլոր կատեգորիաներում Ընկերության ներկայությունն ընդլայնելու և այդ խմիչքների ընդհանուր ծավալում արժեքավոր մասնաբաժին ձեռք բերելու առումով: Նպատակային նորամուծությունները ներառում էին զրո կալորիականությամբ «Կոկա-Կոլա Լայմ»-ը: Տարվա գործունեության արդյունքները գերազանցել են 2020թ. արդյունքները, ինչին նպաստել են վերը նշված ռազմավարական առաջնահերթությունները: Ընկերության բնապահպանական, սոցիալական և կառավարչական նպատակները կազմում են գործունեության անբաժանելի մասը և ծառայում են որպես աճի հիմնական խթաններ:

«Աշխարհն առանց թափոնների» ծրագրի նպատակները լրացնելու և վերջիններիս աջակցելու համար Ընկերությունը հայտարարեց նոր գլոբալ նպատակ համաշխարհային մասշտաբով մինչև 2030թ. փաթեթավորումը դարձնել 100% վերամշակելի, և Հայաստանը կունենա իր դերն այս նպատակի իրագործման գործում: Իր պատրաստականությունը ցուցադրելու համար «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն հաջողությամբ ներդրել է «Աշխարհն առանց թափոնների» ծրագիրը Երևանի 50 դպրոցներում և կշարունակի իրականացնել ծրագիրը 2022թ-ին: Բացի այդ, Ընկերությունը նշանակալի դեր է ունեցել ոլորտի ընկերությունների հետ գիտելիքների փոխանակման գործում՝ Հայաստանում լավագույնս կիրառելի թափոնների կառավարման մոդելը մշակելու համար: Մոդելը հիմք կստեղծի ենթակառուցվածքի զարգացման համար՝ «արտադրողների ընդլայնված պատասխանատվություն» հասկացության շրջանակում: Ինչ վերաբերում է աշխատակիցների զարգացմանն, ապա Ընկերությունն ընդլայնել է բազմազանությունը հավաքագրման գործընթացում, որը ներքին նորարարության և բիզնեսի աճի կարևոր շարժիչ ուժ է: Աշխատանքի տոնավաճառներին մասնակցությունը բարձրորակ աշխատակիցներ ներգրավելու ևս մեկ հնարավորություն ընձեռեց, ինչը թույլ տվեց մեզ գտնել համախոհներ, որոնք էլ ավելի կհարստացնեն բարձրակարգ մասնագետների մեր թիմը: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախագծերը լրացուցիչ արժեք են ստեղծել «Երիտասարդների զարգացում» ծրագրի միջոցով, որի նպատակն է կատարելագործել երիտասարդների կյանքի և բիզնես հմտությունները: Ընկերության վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 8,700 երիտասարդ մինչև 2021թ.:

Եվ վերջինը, բայց ոչ պակաս կարևորը՝ Ընկերության համար առաջնային են իր աշխատակիցները: Սա նշանակում է ցանկալի աշխատանքային միջավայրի ստեղծում, որը հաշվի կառնի և կբավարարի մեր ամենակարևոր ակտիվի՝ մեր մարդկանց պահանջները: Այս առումով Ընկերությունը շարունակում է ամբողջական առումով օգտվել համագործակցության հնարավորություններից՝ հաճախորդների, գործընկերների և շահառուների հետ աշխատելիս: Ընկերության նպատակն է սպասելի բիզնեսի կայուն զարգացում և առաջընթաց:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


Ազդեցությունը տնտեսության վրա

27.9 մլրդ. ՀՀ դրամ 65%

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի 2021թ-ին ստացված հասույթը¹

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի մասնաբաժինը տեղական արտադրության ապրանքների վանառքից ստացված հասույթում 2021թ-ին¹

Ընդամենը ՀԱԱ-ի գծով ազդեցության կառուցվածք, 2021թ.



8.5 միլիարդ ՀՀ դրամ

Ուղղակի ՀԱԱ-ի գծով ազդեցություն

7.8 միլիարդ ՀՀ դրամ

Անուղղակի ՀԱԱ-ի գծով ազդեցություն


2.6 միլիարդ ՀՀ դրամ

Ածանցյալ ՀԱԱ-ի գծով ազդեցություն

19.0 միլիարդ ՀՀ դրամ

Ընդամենը ՀԱԱ-ի գծով ազդեցություն 2021թ-ին^{1,2}

Ընդամենը պետական բյուջե վճարումների կառուցվածք, 2021թ.



6.5 միլիարդ ՀՀ դրամ

Ուղղակի ֆիսկալ ազդեցություն

1.7 միլիարդ ՀՀ դրամ

Ֆիսկալ ազդեցություն մատակարարման շղթայի և ածանցյալ տնտեսական գործունեության արդյունքում

2.4 միլիարդ ՀՀ դրամ

Ֆիսկալ ազդեցություն աշխատակիցների շնորհիվ

10.6 միլիարդ ՀՀ դրամ


Ընդամենը վճարումներ պետական բյուջե (ֆիսկալ ազդեցություն) 2021թ-ին^{1,2}

1. «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի կողմից տրամադրված տեղեկատվություն

2. «Բեյ-Փի-Էմ-Ջի»-ի հաշվարկներ

Աշխատատեղերի ստեղծում

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի աշխատակիցներն ըստ տարիքի, 2021թ.




336

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի աշխատակիցների քանակը 2021թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ¹

20%

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կին աշխատակիցների քանակը 2021թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ¹

Ազդեցությունը աշխատատեղերի ստեղծման գործում (ուղղակի, անուղղակի, ածանցյալ) 2021թ.



3,058

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված ընդամենը աշխատատեղեր, 2021թ.^{1,2}

Ներդրումներ

848 միլիոն ՀՀ դրամ **10%**

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ներդրումների ընդհանուր գումարը 2021թ-ին¹

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կապիտալ ծախսումների ինտենսիվությունը 2021թ-ին^{1,2}

Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա



- **98.3%** – «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի թափոնների վերամշակման մակարդակը 2021թ-ին¹
- **2.42 1/2** – «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ջրի սպառումն արտադրված ըմպելիքի մեկ լիտրի հաշվով 2021թ-ին¹
- **0.56 ՄՋ/2** – «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի էներգիայի սպառումն արտադրված ըմպելիքի մեկ լիտրի հաշվով 2021թ-ին¹
- **47%** – «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի՝ շրջակա միջավայրին չվնասող ըմպելիքները սառեցնող սարքավորումների մասնաբաժինը 2021թ-ին¹

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ն («Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա» կամ «Ընկերություն») զովացուցիչ ըմպելիքների համաշխարհային խոշորագույն արտադրողներից մեկի՝ «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի»-ի դուստր ձեռնարկությունն է: «Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա»-ն գործում է որպես Կոկա-Կոլա ՀԲԸ Ուկրաինա, Հայաստան և Մոլդովա գործարար միավորի մաս:

«Կոկա-Կոլա ՀԲԸ»-ն իր գործունեությունն իրականացնում է 29 երկրներում և երեք մայրցամաքներում՝ սկսած արևմուտքում Իռլանդիայի Քերի կոմսության Դինգլի թերակղզուց մինչև Պետրոպոլիսի՝ Ռուսաստանի ամենաարևելյան կետը, Հյուսիսային բևեռային շրջանից մինչև Նիգերիայի մերձարևադարձային գոտիները:

«Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա»-ն Հայաստանում իր գործունեությունն է իրականացնում 1996թ-ից: Ընկերությունը «Կոկա-Կոլա» ընկերության արտադրանքի միակ լիազորված շաղցնող ընկերությունն է Հայաստանում:

«Կոկա-Կոլա ՀԲԸ Արմենիա»-ն հայ սպառողներին առաջարկում է ոչ ալկոհոլային խմիչքների անընդհատ աճող տեսականի, այդ թվում՝ հյութեր, օշարակներ, էներգետիկ ըմպելիքներ և թեյեր, ինչպես նաև աշխարհահռչակ Կոկա-Կոլա, Սփրայտ և Ֆանտա գազավորված զովացուցիչ ըմպելիքների ապրանքանիշերի արտադրանքը:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆ

«Կոկա-Կոլա ՀԲԸ»-ն ձգտում է լինել 24/7 առաջատար ըմպելիք արտադրող ընկերություն: Այդ նպատակով 2019թ-ին ներկայացվել էր «Չարգացման ուղի 2025» ռազմավարությունը³: Ռազմավարության հիմքում ընկած են հետևյալ հինգ նպատակները.



- Եզակի ապրանքատեսականու օգտագործում
- շուկայում առաջատար դիրքի գրավում
- աճի խթանում մրցունակության և ներդրումների միջոցով
- ներուժի զարգացում
- համայնքի վստահություն, շրջակա միջավայրի պահպանություն, կայուն զարգացում և գործարար էթիկա

3. coca-colahellenic.com

Ընկերությունը սահմանել է նաև հետևյալ հիմնական թիրախները 2021-2025թթ. համար¹

5-6%

Հասույթի միջին ան տարեկան կտրվածքով՝ անկախ արտարժույթի փոխարժեքի տատանումներից



Աշխատակիցների բավարարվածության մակարդակի առավելագույն շեմի գերազանցում

0.2-0.4%

EBIT մարժայի միջին ան տարեկան կտրվածքով



«Առաքելություն 2025» կայուն զարգացման նպատակների իրագործում»

«Առաքելություն 2025» նախաձեռնությունը մշակվել է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) և շահառուների ներգրավմամբ մշակված ռազմավարությունների հիման վրա:

Առաքելության նպատակներն են՝



Արտանետումների նվազեցում



Բաղադրիչների աղբյուրների որոնում



Ջրի օգտագործում և կառավարում



Սննդայնություն





Փաթեթավորում («Աշխարհն առանց թափոնների»)



Մեր թիմն ու համայնքները

ԱՐԺԵՔՆԵՐ

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի գործունեությունը կախված է իր հաճախորդների, սպառողների և համայնքների վստահությունից: Ընկերության մշակույթը աշխատավայրում և հաջողությունը շուկայում միշտ հիմնված են եղել հետևյալ կորպորատիվ արժեքների վրա¹.



Ընկերության նպատակն է ստեղծել ներառական, արդար և դրական աշխատանքային միջավայր: Ծուկայում մրցակցությունը լարված է, հետևաբար, չափազանց կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր գործընթաց իրականացվի օրինական կարգով և էթիկայի նորմերին համապատասխան:

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն իր գործունեությունն իրականացնում է Տնօրենների խորհրդի կողմից հաստատված և Գործառնական կոմիտեի աջակցությամբ ընդունված Գործարար վարքագծի կոդեքսի համաձայն:

Անկախվում է, որ յուրաքանչյուր աշխատակից կպահպանի Գործարար վարքագծի կոդեքսը՝ որպես իր աշխատանքային պարտականությունների մաս: Գործարար վարքագծի կոդեքսը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր աշխատում են «Կոկա-Կոլա ՀԲԶ» ընկերություններում ողջ աշխարհում՝ անկախ աշխատանքի գտնվելու վայրից, դերից կամ վերադասության աստիճանից: Այդ կանոններին հետևում են «Կոկա-Կոլա ՀԲԶ»-ի բոլոր աշխատակիցները, մենեջերները, գործառնական կոմիտեի անդամները և տնօրենները: Ընկերության մատակարարների, դիստրիբյուտորների, գործակալների, խորհրդատուների և կապալառուների համար նույնպես կիրառելի են Գործարար վարքագծի կոդեքսի կանոններից շատերը՝ «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի «Մատակարարի առաջնորդման ուղեցույց»-ի միջոցով:

Ընկերության բոլոր մատակարարները տեղեկացված են վերջինիս կաշառակերության դեմ քաղաքականության մասին:

Բոլոր նոր աշխատակիցները պարտավոր են անցնել Գործարար վարքագծի կոդեքսի և կաշառակերության դեմ քաղաքականությանը վերաբերող դասընթացներ կաշառակերության և կոռուպցիայի դեմ ուղղված կանոնակարգերի մասին պատկերացում կազմելու համար: Դասընթացների ավարտին նրանք ստանում են Գործարար վարքագծի կոդեքսի և կաշառակերության դեմ քաղաքականության ձեռնարկների պատճենները և ստորագրում են համապատասխան հավաստում: Նոր աշխատակիցները դասընթացներ են անցնում աշխատանքի ընդունվելուց հետո առաջին երկու ամիսների ընթացքում և պարտավոր են երեք տարին մեկ ազամ կրկին անցնել թարմացված դասընթացները:

ՂԵԿԱՎԱՐ ԱՆՃՆԱԿԱԳՈՐ ԲԱՊԿԱԳԱԾ Է յՈՐԹ ԱՆՊԱՄԻԿ.

Վերադաս ղեկավար անձնակազմը բաղկացած է յոթ անդամից.



- Գլխավոր տնօրեն
- Իրավաբանական բաժնի ղեկավար
- Հասարակության հետ կապերի և կայունության բաժնի ղեկավար
- Մարդկային ռեսուրսների բաժնի գործընկեր
- Ֆինանսական բաժնի ղեկավար
- Մարքեթինգի բաժնի ղեկավար
- Գործարանի ղեկավար

Վերադաս ղեկավար անձնակազմը հաշվետու է բիզնես միավորի վերադաս ղեկավարությանը՝ իրենց համապատասխան գործառույթների համաձայն:

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն աջակցում է ոլորտի մի շարք կազմակերպությունների, ինչպես նաև արտաքին կողմերի մշակած տնտեսական, բնապահպանական և սոցիալական կանոնակարգերի, սկզբունքների և այլ նախաձեռնությունների: Ընկերությունը աջակցել է հետևյալ արտաքին նախաձեռնություններին.

- Կայուն զարգացման նպատակներ
- Դոու Ջոնսի կայունության ինդեքսներ
- Կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման սկզբունքներ



«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն անդամակցում է հետևյալ ասոցիացիաներին



«Ամերիկայի առևտրի պալատ Հայաստանում»՝ Խորհրդի անդամ, Փոխնախագահ
 «Ամերիկայի առևտրի պալատ Հայաստանում», «Արագ սպառման ապրանքների կոմիտե» (FMCG), «Թափոնների կառավարման» աշխատանքային խումբ՝ Խմբի նախագահ

«Եվրոպական բիզնես ասոցիացիա»՝ Խորհրդի անդամ

«Հայ-բրիտանական գործարարության պալատ»՝ Փոխնախագահ



«Մանթաշյանց» գործարարների միության՝ Անդամ

«Օրրան» ՀԿ՝ Խորհրդի անդամ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խախտումների մասին տեղեկացում

Եթե աշխատակիցը նկատում է Ընկերության քաղաքականության որևէ դրույթ խախտող գործողություն, նա պատասխանատու է այդ մասին տեղեկացնել Էթիկայի և համապատասխանության պատասխանատուին կամ օգտագործել հատուկ «Խոսի՛ր» թեժ գիծը, որը թույլ է տալիս կասկածները բարձրաձայնել անանուն: Կասկածելի խախտումները վերանայվում և հետաքննվում են ըստ անհրաժեշտության և կարող են հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Մանրամասները կարգավորվում են Գործարար վարքագծի կոդեքսով և խախտումների հաղորդման մասին քաղաքականությամբ: «Խոսի՛ր» թեժ գծի մասին տեղեկատվությունն աշխատակիցներին տրամադրվում է ներածական դասընթացների ընթացքում, բացի այդ Ընկերության տարածքում տեղադրված են տեղեկատվական վահանակներ:



Տնտեսական, բնապահպանական և սոցիալական հարցերի համար գործադիր օղակի պատասխանատու

Կառավարչական և կայուն զարգացման հարցերով զբաղվում է Հասարակության հետ կապերի և կայունության բաժինը:

Շահառուների ներգրավվածություն



Շահառուների հետ հաղորդակցման հիմնական ուղիներն են՝

- պաշտոնական հանդիպումները (առցանց/դեմ առ դեմ)
- պաշտոնական նամակները և
- էլեկտրոնային նամակները:

ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԱՆԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՈՒՄ



«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ն ձգտում է բավարարել ներքին շուկայի արագ աճող պահանջները՝ արտադրելով, ներմուծելով և մատակարարելով երկու տեսակի արտադրանք՝ գազավորված ոչ ալկոհոլային ըմպելիքներ և ոչ գազավորված ըմպելիքներ: Ընկերության կողմից արտադրվող ըմպելիքների տեսականին ներառում է.

Փազավորված ոչ ալկոհոլային ըմպելիքներ (պլաստիկ (պոլիէթիլեն տերեֆտալատ) և վերադարձվող ապակե շշերով)



Կոկա-Կոլա, Ֆանտա, Սպրայտ



Ոչ գազավորված ըմպելիքներ (պլաստիկ (պոլիէթիլեն տերեֆտալատ) շշերով)



«Բոնակվա» չգազավորված ջուր



Ներմուծվող ըմպելիքներ (թիթեղյա տարայով, պլաստիկ (պոլիէթիլեն տերեֆտալատ) շշերով և ստվարաթղթե տուփերով)



Կոկա-Կոլա, Ֆանտա, Սպրայտ, Ծվեփս, Կոկա-Կոլա Քոֆի, Ֆյուզի, Կոկ Էներջի, Բըրն, Դոբրի, Նեմիրով




2021թ. նորությունները

- Կոկա-Կոլա Լայմ առանց շաքարի 0.5/1լ տարայով
- Դոբրի Մանգո 1լ տարայով

2022թ. համար պլանավորվող նոր ըմպելիքներ

- Բըրն Դարք Էներջի 0.25լ թիթեղյա տարայով
- Կոկա-Կոլա + Բոֆի (առանց շաքարի) 0.25լ թիթեղյա տարայով
- Ֆանտա Էփըլ 0.5/1լ տարայով

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ապրանքատեսակների վաճառքի կառուցվածքն ըստ ծավալի, 2021թ.^{1,2}



84.3%

Գազավորված
ըմպելիքներ



11.0%

Հյութեր/
օշարակներ



3.0%

Ջուր




1.3%

Թեյ



0.3%

Ալկոհոլային
ըմպելիքներ



0.1%

Էներգետիկ
ըմպելիքներ

Մպառողական ապրանքների վաճառքի ընդհանուր ծավալի բացվածքն ըստ հագեցած ճարպերի, տրանսճարպերի, նատրիումի և ավելացված շաքարի ցածր պարունակությամբ ապրանքատեսակների¹

27%

Գազավորված
ըմպելիքներ

38%

Հյութ

100%

Ջուր

Կալորիաների նվազեցում

Կալորիաների նվազեցումը «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի առաջնահերթություններից մեկն է, և դա է պատճառը, որ տեսականին անընդհատ թարմացվում է շաքար չպարունակող արտադրատեսակներով: 2021թ-ին Ընկերությունը թողարկել է շաքար չպարունակող նոր արտադրատեսակ՝ «Կոկա-Կոլա Լայմ»-ը, որը թույլ է տալիս շաքար չպարունակող արտադրատեսակների ծավալն ավելացնել +1.6 տոկոսային կետով՝ նախորդ տարվա համեմատ և +1 տոկոսային կետով՝ նպատակային ցուցանիշի համեմատ:

Բոլոր հաղորդակցություններում և գովազդներում Ընկերությունը շեշտը դնում է «առանց շաքարի» խառնուրդի վրա: 2020թ-ից նվազեցվել է շաքարի պարունակությունը Փանտա և Սպրայտ ապրանքանիշերի արտադրանքում, և հաղորդակցության և շուկայավարման գործունեությունը հիմնականում կենտրոնացած է շաքար չպարունակող բնական հյութերի վրա:

-2%

2021թ-ի կալորիականության նվազեցման նպատակը իրագործվել է՝ հաշվի առնելով գազավորված ոչ ակտիվային ըմպելիքների ամբողջ ապրանքատեսականին տարվա համար: Մեկ միավորին բաժին ընկնող կալորիաները նվազել են 2%-ով 2020թ. համեմատ:

Պիտակավորում

Հայաստանում արտադրվող և վաճառվող ողջ արտադրանքը համապատասխանաբար պիտակավորված են.

- Արտադրանքների պիտակների վրա տեղադրված նշանները տրամադրում են տեղեկատվություն փաթեթավորման վերամշակման գործընթացի և փաթեթավորման տեսակի մասին (պոլիէթիլեն տերեֆտալատ, ալյումին, ապակի):
- Պիտակի վրա նաև հղում է արվում Եվրասիական միության գործող օրենսդրությանը, որին արտադրանքն ամբողջությամբ համապատասխանում է սննդի անվտանգության առումով:
- Պիտակների վրա հստակ նշված են ասպարտամի (որն առկա է որոշ ապրանքատեսակներում) հնարավոր հետևանքները առողջության համար:



Խախտումների բացակայություն

2021թ-ին Ընկերության արտադրանքի պիտակավորման հետ կապված միջադեպեր, տույժեր, նախազգուշացումներ կամ անհամապատասխանության հարցեր չեն եղել:



Հետ կանչված արտադրանքների բացակայություն

2020թ-ին և 2021թ-ին հետ կանչված արտադրանքներ չեն եղել:



100%


Երևանի գործարանում 100% արտադրված ապրանքատեսականին հավաստագրված է Սննդի անվտանգության կառավարման ստանդարտ 22000 տարբերակ 5.1- ով:

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱ

Ընկերության տվյալներով՝ «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի արտադրությունում օգտագործվող ամբողջ հումքը և օժանդակ նյութերը մատակարարում են «Կոկա-Կոլա»-ի կողմից հաստատում ստացած մատակարարները:

Հաստատման ընթացակարգը հուսալի է և երաշխավորում է մատակարարների կողմից «Կոկա-Կոլա» ընկերության և տեղական օրենսդրության պահանջների հետ անհամապատասխանության բացակայությունը:

2021թ-ին տեղական մատակարարներից գնումների հիմնական կատեգորիաներն են.



- Տրանսպորտային ծառայություններ
- Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն
- Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք
- Սննդամթերք և ըմպելիքներ
- Այլ

40%

Ընկերության գնումների 40%-ը կատարվել է տեղական մատակարարներից, մինչդեռ ներմուծվող ապրանքներն ու ծառայությունները 2021թ-ին կազմել են 60%¹:

35.6%

2021թ-ին գրանցվել է 45 նոր մատակարար, որոնցից 35.6%-ի համար 2021թ. ստուգվել են բնապահպանական և սոցիալական ցուցանիշները¹:

«Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ն պահանջում է, որպեսզի 20 հազար Եվրո և ավելի շրջանառություն ունեցող պոտենցիալ մատակարարները ներկայացնեն ԲՄԿ ազդեցության կամ ՈԱՄ հաշվետվություն՝ նախքան հաստատում ստանալը: Եթե Ընկերությունը հայտնաբերում է շրջակա միջավայրի վրա որևէ պոտենցիալ բացասական ազդեցություն մատակարարի գործունեության արդյունքում, այդ մատակարարի հետ աշխատանքային հարաբերություններ չեն հաստատվում: «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի բոլոր պոտենցիալ մատակարարների համար ստուգվում են բնապահպանական և սոցիալական ցուցանիշները ՈԱՄ ֆայլի լրացման միջոցով, որը ներառում է հարցեր առողջության պահպանման և անվտանգության ապահովման ընթացակարգերի,

բնապահպանության և աշխատանքային իրավունքների պահպանման պրակտիկայի վերաբերյալ:


Կայացվող որոշումը հիմնված է նրանց պատասխանների արդյունքում ստացված միավորի վրա: Գործում է նաև լրացուցիչ մեխանիզմ, որը նախատեսում է Մատակարարի/Կապալառուի/Ծառայություն մատուղոցի գրանցումը Ecovadis⁴ համակարգում, որը կայունության արտաքին գնահատման հարթակ է: Գնումների տոկոսը, որոնց համապատասխանությունը միջազգայնորեն ճանաչված՝ շրջակա միջավայրի նվազագույն վնաս հասցնող արտադրության ստանդարտներին հաստատվել է, կազմել է 100% 2021թ-ին:

4. ECOVADIS-ը կայունության վարկանիշեր տրամադրող համաշխարհային կազմակերպություն է, որի մեթոդաբանությունը հիմնված է կայունության միջազգային ստանդարտների, այդ թվում՝ Համաշխարհային հաշվետվությունների նախաձեռնության ստանդարտների, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի և ISO 26000 վրա:




Մենդի անվտանգության համակարգերի հավաստագրման FSSC 22000 and ISO 9001 ստանդարտների հավաստագրման շրջանակը ներառում է բոլոր զագավորված ոչ ակտիվային ըմպելիքները, չգագավորված ջուրը և օշարակները, որոնք արտադրվում են Երևանի գործարանում:

2021թ. սպասարկվող շուկաներն ըստ ծավալի^{1,2}



- Ֆամանակակից առևտուր
- Մասնատված առևտուր
- Վաճառքը և հանրային սնունդ
- Արագ սնունդ
- Մեծածախ վաճառք
- Այլ

2021թ. սպասարկվող շուկաներն ըստ հասույթի^{1,2}



- Ֆամանակակից առևտուր
- Մասնատված առևտուր
- Վաճառքը և հանրային սնունդ
- Արագ սնունդ
- Մեծածախ վաճառք
- Այլ



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերության կողմից իրականացված տնտեսական գործունեության հիմնական չափման միջոցը նրա ընդհանուր ներդրումն է Հայաստանում՝ ՀԱԱ-ի տեսանկյունից (համախառն ավելացված արժեք): ՀԱԱ-ն առանձին ընկերության, արդյունաբերության ոլորտի կամ տնտեսության ճյուղի կողմից արտադրված ապրանքների և ծառայությունների տնտեսական արժեքի չափման միջոց է՝ առանց միջանկյալ սպառման (օրինակ՝ արտադրական գործընթացում օգտագործվող ապրանքների և ծառայությունների): Այն գնահատում է արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքի և դրանց արտադրության համար օգտագործված մուտքային ռեսուրսների, օրինակ՝ չմշակված նյութերի արժեքի տարբերությունը: Ազգային համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ներառում է տնտեսության բոլոր տնտեսական գործակալների կողմից ստեղծված ՀԱԱ-ի հանրագումարը:

ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱ-Ի ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

«Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի ներդրումը ՀԱԱ-ում գնահատվում է երեք հիմնական ուղղությամբ.

Ուղղակի. առաջին մակարդակի ազդեցություն, երբ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի արտադրանքի պահանջարկը ստեղծում է բիզնես գործունեություն և արդյունք:

Անուղղակի. երկրորդ մակարդակի ազդեցություն, որը ձևավորվում է այն գործունեության և արդյունքի հիման վրա, որոնք ստեղծվում են «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի արժեքի ստեղծման շղթայի միջոցով՝ իր սեփական գործունեության համար «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի կողմից ապրանքների և ծառայությունների գնման արդյունքում:

I մուլտիպլիկատորի անուղղակի ազդեցություն. տեղական ընկերությունների կողմից ստեղծված ավելացված արժեքն է, որոնցից «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ն ուղղակիորեն գնում է ապրանքներ և ծառայություններ և մանրածախ առևտրով զբաղվող վաճառողների կողմից ստեղծված ավելացված արժեքն է, որոնք «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ին վաճառում են իրենց ապրանքները⁵: Այն ներառում է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի ուղղակի մատակարարների, դիստրիբյուտորների և մանրածախ առևտրով զբաղվող վաճառողների աշխատավարձը, հարկերը և հասույթը:

II մուլտիպլիկատորի անուղղակի ազդեցություն առաջանում է, քանի որ «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի տեղական մատակարարները և մանրածախ առևտրով զբաղվող վաճառողներն իրենց հերթին ապրանքներ և ծառայություններ են գնում մատակարարման շղթայում՝ իրենց գործունեությունն ապահովելու համար, մատակարարների մատակարարները նույնպես գնում են ապրանքներ և ծառայություններ, և ցիկլը շարունակվում է ամբողջ տնտեսությունում: «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի սկզբնական ծախսումները և մանրածախ առևտրով զբաղվող վաճառողների հասույթը ստեղծում են ապրանքների և ծառայությունների հավելյալ պահանջարկ տնտեսությունում, որին տնտեսական գործակալներն արձագանքում են ավելացնելով արտադրության ծավալները՝ այդպիսով առաջացնելով ավելացված արժեք:

Աձանցյալ. մուլտիպլիկատորի ազդեցություն, որն առաջանում է Հայաստանի տնտեսությունում «Կոկա-Կոլա»-ի ուղղակի աշխատողների և «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի Հայաստանի մատակարարման շղթայի աշխատողների կողմից «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու արդյունքում: Այս ծախսումները առաջացնում են լրացուցիչ տնտեսական գործունեություն այն ընկերությունների համար, որոնցից այս աշխատողները գնում են ապրանքներ և ծառայություններ և այդ ընկերությունների սեփական ավելի լայն արժեքի ստեղծման շղթաների համար:

Ուղղակի ՀԱԱ-ի ազդեցությունը չափելիս կիրառվում է հաշվարկի արտադրական մոտեցումը: Անուղղակի և աձանցյալ ազդեցությունները գնահատելիս կիրառվում է ծախսեր-արդյունք մոդելավորման մոտեցումը⁶: Մեր վերլուծությունը հիմնված է «Կոկա-Կոլա ՀԲԲ Արմենիա»-ի մատակարարման շղթայի կառուցվածքի վրա, և վերլուծության համար օգտագործվել է Հայաստանին հատուկ ծախսեր-արդյունք աղյուսակը և դրանից ստացված I և II կարգի մուլտիպլիկատորները:

Այս աղյուսակը մատրիցային ձևով ցույց է տալիս տնտեսության ճյուղերի փոխկապակցվածությունն այն ապրանքների և ծառայությունների արժեքի (ծախսումներ) տեսանկյունից, որոնք պահանջվում են տնտեսության տվյալ ճյուղում արդյունքի յուրաքանչյուր միավորի ստեղծման համար:

5. Հայաստանից դուրս կատարած ցանկացած ծախսում համարվում է «արտահոսք»: Մեր վերլուծության մեջ օգտագործվող տնտեսական մուլտիպլիկատորները կիրառվում են միայն Հայաստանի ներսում կատարած ծախսումների վրա:

6. Այս մոտեցումը մշակվել է տնտեսագետ Վասիլի Լեոնտևի կողմից: Վ. Լեոնտև, 1986թ. «Ծախսեր - արդյունք տնտեսագիտություն», Օքսֆորդի համալսարանի մամուլ:

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՄ

Աշխատատեղերի ապահովումն այն կարևոր ուղղություններից մեկն է, որի միջոցով «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն իր ներդրումն է կատարում Հայաստանի տնտեսությունում: Աշխատողների թվաքանակը չափվում է լրիվ դրույքին համարժեք (ԼԴՀ) միավորով:

Աշխատատեղերի ապահովման ազդեցությունը նույնպես գնահատվում է ուղղակի, անուղղակի և ածանցյալ ազդեցության տեսանկյունից:

Ուղղակի. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ուղղակի աշխատակիցները:

Անուղղակի. աշխատատեղերի ապահովում «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մատակարարման և առաքման շղթայում իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում:

Ածանցյալ. աշխատատեղերի ապահովում լրացուցիչ տնտեսական գործունեության արդյունքում, որն առաջանում է Հայաստանում ուղղակի և անուղղակի աշխատակիցների կողմից գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու շնորհիվ:

Աշխատատեղերի ապահովման ուղղակի և անուղղակի ազդեցությունները գնահատվում են նույն կերպ, ինչ որ ներդրումները ՀԱԱ-ում՝ կիրառելով ծախսեր- արդյունք մոդելավորման մոտեցումը:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ներդրումային գործունեությունը տնտեսությունում Ընկերության ներդրումների գնահատման կարևոր չափորոշիչն է, քանի որ համարվում է տնտեսական անը խթանող նշանակալի գործոն:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ներդրումների մակարդակը որոշվում է հետևյալ ցուցանիշների միջոցով.

- Սեփական կապիտալ ծախսումները 2021 ֆինանսական տարում,
- Կապիտալ ծախսումների ինտենսիվությունը:

Կապիտալ ծախսումների ինտենսիվությունը գնահատվում է որպես Ընկերության կապիտալ ծախսումների և վերջինիս կողմից ստեղծած ուղղակի ՀԱԱ-ի հարաբերակցություն: Այն համեմատվում է երկրի մասշտաբով տնտեսության մեջ իրականացված կապիտալ ծախսումների միջին ինտենսիվության հետ՝ օգտագործելով Համախառն հիմնական կապիտալի ձևավորումը (GFCF⁷)՝ հաշվարկված որպես ՀԱԱ-ի մասնաբաժին:

ՖԻՍԿԱԼ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՆ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ընդհանուր ֆիսկալ ազդեցությունը ներառում է.

Ուղղակի ֆիսկալ ազդեցություն. «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից տարեկան կտրվածքով պետական բյուջե կատարած վճարումների ընդհանուր գումարը:

Ֆիսկալ ազդեցություն մատակարարման շղթայի և ածանցյալ տնտեսական գործունեության միջոցով.

մատակարարման շղթայի և ածանցյալ տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված ֆիսկալ ազդեցությունը գնահատվում է հետևյալ կերպ.

- «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի մատակարարման և առաքման ցանցի միջոցով առաջացած ֆիսկալ ազդեցություն,
- ավելի լայն մատակարարման շղթայի միջոցով առաջացած ֆիսկալ ազդեցություն:

Աշխատակիցների ֆիսկալ ազդեցությունը գնահատում է «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ուղղակի աշխատակիցների միջոցով ձևավորված ֆիսկալ ազդեցությունը, ինչպես նաև «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի անուղղակի և ածանցյալ աշխատակիցների միջոցով ձևավորված ֆիսկալ ազդեցությունը:

7. Համախառն հիմնական կապիտալի ձևավորումը (GFCF), որը նաև կոչվում է «ներդրումներ», սահմանվում է որպես արտադրված ակտիվների ձեռքբերում (այդ թվում՝ օգտագործված ակտիվների ձեռքբերումը), ներառյալ՝ այդ ակտիվների արտադրությունն արտադրողների կողմից սեփական օգտագործման համար՝ հանած օտարումները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՍԿԱՅԱՆԱԿԱՆ ՆԵՐՊՐՈՒՄՆԵՐ

Սոցիալական և բնապահպանական ներդրումը գնահատելու համար մենք՝

- իրականացրել ենք տեղում հետազոտություն,
- վերլուծել ենք «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը (Քեյ-Փի-Էմ-Ջի-ն չի իրականացրել տրամադրված տվյալների ճշգրտության ստուգում):

Ազդեցության քանակական գնահատում չի իրականացվել, քանի որ դա նախատեսված չէր աշխատանքների շրջանակով: Մասնավորապես, մեր վերլուծությունը իրականացվել է տեղեկատվության վերոնշյալ աղբյուրների հիման վրա՝ առանց ամբողջական ազդեցության հատուկ գնահատման: Աշխատանքների շրջանակում ներառված ազդեցության ոլորտները և սոցիալական ծրագրերը համաձայնեցվել են «Կոկա-Կոլա ՀԲԶ Արմենիա»-ի հետ:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎ-Ի ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ


Մեր գնահատմամբ 2021թ-ին «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ն ստեղծել է 19.0 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով ՀԱԱ Հայաստանի տնտեսությունում՝ ներառյալ անուղղակի և անմիջական ազդեցությունները:



Այն կազմել է նշված ժամանակահատվածում Հայաստանում ստեղծված ընդհանուր ՀԱԱ-ի 0.31%-ը^{1,2,8}:

19.0 միլիարդ ՀՀ դրամից՝

Համախառն արժեքի տեսանկյունից տնտեսական ազդեցության կառուցվածքը 2021թ-ին



8.5 միլիարդ ՀՀ դրամ

Ընկերության սեփական գործունեության արդյունքում ստեղծված ուղղակի ՀԱԱ

7.8 միլիարդ ՀՀ դրամ

Հայաստանում գործող 1-ին կարգի (ուղղակի) մատակարարների գծով Ընկերության ծախսումների և մատակարարման ավելի լայն շղթայում ձևավորված գործունեության արդյունքում Ընկերության կողմից ստեղծված անուղղակի ՀԱԱ

2.6 միլիարդ ՀՀ դրամ

Ընկերության ուղղակի և անուղղակի աշխատակիցների կողմից «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ի գործունեության հետ կապված իրենց աշխատավարձը Հայաստանում ծախսելու արդյունքում Ընկերության կողմից ստեղծված անմիջական ՀԱԱ:

+1.2 ՀՀ դրամ

2021թ-ին «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված ուղղակի ՀԱԱ-ի յուրաքանչյուր 1 ՀՀ դրամի դիմաց Հայաստանի տնտեսությունում ստեղծվել է լրացուցիչ 1.2 ՀՀ դրամ անուղղակի և անմիջական ՀԱԱ^{1,2}:



65%



35%

«Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ն հասույթը ստանում է Հայաստանում արտադրված և ներմուծված արտադրանքի վաճառքից: 2021թ-ին Հայաստանում արտադրված արտադրանքների վաճառքից ստացված հասույթի մասնաբաժինը ընդհանուր հասույթի մեջ կազմել է մոտ 65%, իսկ ներմուծված արտադրանքներից հասույթը՝ 35%:

Ընկերության անուղղակի ազդեցությունը երկրի տնտեսությունում ՀԱԱ-ի տեսանկյունից ստեղծում են տեղական մատակարարները, որոնցից «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ի ուղղակիորեն գնում է ապրանքներ և ծառայություններ, և տեղական դիստրիբյուտորների և մանրածախ առևտրով զբաղվող վաճառողների միջոցով, որոնք վաճառում են Ընկերության արտադրանքը:

2021թ-ին «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ի գնումների 40%-ը կազմակերպվել է Հայաստանի տնտեսության ներսում¹: Տեղական մատակարարների և առևտրային գործընկերների հետ «Կոկա-Կոլա ՀՐՔ Արմենիա»-ի անմիջական համագործակցության արդյունքում ստեղծվել է 5.2 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր գումարով 1-ին կարգի մատակարարների շղթայի անուղղակի ՀԱԱ: Մատակարարման ավելի լայն շղթայի միջոցով ստեղծվել է 2.6 մլրդ ՀՀ դրամ անուղղակի ՀԱԱ:

8 Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

Մենք իրականացրել ենք «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա»-ի ուղղակի, անուղղակի և անանցյալ՝ ՀԱԱ-ի գծով ազդեցության վերլուծություն՝ ըստ տնտեսության ճյուղերի, որի մանրամասները ներկայացված են ստորև: «Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա»-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության համաձայն՝ 2021թ-ին ՀԱԱ-ի աճի հիմնական խթաններն են եղել տնտեսության հետևյալ ճյուղերը.



Սննդամթերք և ըմպելիքներ

Հիմնականում արտադրական նպատակով տեղական արտադրանքի ձեռքբերման շնորհիվ



Մեծածախ առևտուր

Ընկերության արտադրանքի իրացման արդյունքում առաջացած ազդեցության շնորհիվ



Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն


Հիմնականում շուկայավարման և կառավարչության հետ կապված ծառայություններից օգտվելու շնորհիվ




Տրանսպորտային ծառայություններ

Արտադրանքի առաքման շնորհիվ


«Կոկա-Կոլա ՀՔՔ Արմենիա»-ի ուղղակի և անուղղակի ՀԱԱ-ի գծով ազդեցությունը Հայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի 2021թ-ին, մլն. ՀՀ դրամ^{1,2}




Մեծածախ առևտուր




Սննդամթերք և ըմպելիքներ




Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն




Տրանսպորտային ծառայություններ




Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք



Մանրածախ առևտուր



Էլեկտրականություն, գազ և ջուր



Այլ

- Անուղղակի ՀԱԱ, 1-ին կարգի մատակարարների ՀԱԱ
- Անուղղակի ՀԱԱ, մատակարարման առավել լայն շղթայի ՀԱԱ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի ածանցյալ ՀԱԱ-ի գծով ազդեցությունը Հայաստանում՝ ըստ տնտեսության ճյուղերի 2021թ-ին, մլն. ՀՀ դրամ^{1,2}



1,032

Մեծածախ առևտուր



369

Տրանսպորտային ծառայություններ



229

Նավթային, քիմիական և ոչ մետաղական հանքային արտադրանք



190

Ֆինանսական միջնորդություն և բիզնես գործունեություն



181

Սննդամթերք և ըմպելիքներ



125

Մանրածախ առևտուր



215

Այլ



299

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»

ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի անձնակազմի կառուցվածքը



336

աշխատակից 2021թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ¹

Աշխատավարձ

Մկանակ մակարդակի ստանդարտ աշխատավարձի հարաբերակցություն ըստ սեռի՝ տեղական նվազագույն աշխատավարձի համեմատ¹




Ստեղծված աշխատատեղեր

Ըստ գնահատումների «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ն ստեղծել է 3,058 աշխատատեղ, ինչը կազմում է 2021թ. Հայաստանի ընդհանուր աշխատողների թվաքանակի 0.31%-ը^{1,2,8}:

3,058 աշխատատեղերից.

Աշխատատեղերի ապահովում (ուղղակի, անուղղակի, անհանգյալ)



+8.1

2021թ-ին «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված յուրաքանչյուր ուղղակի աշխատատեղի շնորհիվ Հայաստանում ստեղծվել է լրացուցիչ 8.1 աշխատատեղ (անուղղակի և անհանգյալ)^{1,2}:

«Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված աշխատատեղերն ըստ տնտեսության ճյուղերի

Ստորև ներկայացված է «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից ստեղծված աշխատատեղերի վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի: «Կոկա-Կոլա ՀԲՔ Արմենիա»-ի կողմից տրամադրված ֆինանսական տեղեկատվության

համաձայն՝ 2021թ. ընթացքում ստեղծված աշխատատեղերի թվաքանակի աճի հիմնական խթանները եղել են տնտեսության հետևյալ ճյուղերը.



Մսնդամթերք և ըմպելիքներ

Հիմնականում արտադրական նպատակով տեղական արտադրանքի ձեռքբերման շնորհիվ



Մեծածախ առևտուր


Ընկերության արտադրանքի իրացման արդյունքում առաջացած ազդեցության շնորհիվ




Տրանսպորտային ծառայություններ

Առաքումների շնորհիվ


